



ԵՏԴՐԱՏԻ

ԵԺԱՆԱԳԻՆ

ԻՐԱԴԱՐԱՆ

№ 125—126

№ 125—126

ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆ

ԲԱՆԱԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

891.99

S-47

Ս.Ն. ՀՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 6

13 APR 2011

ՊԵՏԶՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 125-126

№ 125-126

891.99

S-47

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

42

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

41017 1000
39769



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1 9 3 6

58597

ՊԵՏԻՐԱՆԻ ՄԱՐԱՆ
ԳԼԱՎԻԽԻ ԼԻԱԳՐ ԱՅ 309 պատ. ԱՅ 35
հրատ. 3595 տ/րաժ 10000

1904—1908

ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Սահուն քայլերով, աննշմար, վորպես քնքույշ
մութի թև,
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիլ շոյելով
Իրիկնաժամին, թվերն որորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի դունատ աղջիկ ճերմակ
չորերով...

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց,
կարծես թե սիրտ քնքույշ խոսք ասաց նիրհող
դաշտերին.
Ծաղիկները մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
Յեվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին

FATUM

Կախարդական մի շղթա կա յերկնքում՝
Աներևույթ, վորպես ցավը խոր հողու,
Իջնում ե նա հուշիկ, վորպես իրիկուն,
Ողակելով լույս աստղերը մեկ-մեկու:

Մեղմ գիշերի գեղազանդուր յերազում՝
Այն աստղերը, վորպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտադին յերազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան:

Յես ու դու յեւ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ յերազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և հարազատ և ոտար...

ԱՇՆԱՆ ՅԵՐԳ

Յրտահա՛ր, հողմավա՛ր,
Դողացին մեղմաբար
Տերեները դեղին,
Պատեցին իմ ուղին...

Ճաճանչները թռչնան...
Կանաչները աչնան—
Իմ խոհերը մոլար՝
Յրտահա՛ր, հողմավա՛ր...

Կրակներըս անցան,
Ֆուրտ ու մեղ է միայն...
Անուրջներս յերկնածին
Գնացի՛ն, գնացի՛ն...

ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ

Աշուն է, անձրև... Ստվերներն անձև
Դողում են դանդաղ... Պաղ, միասրաղաղ անձրև՝
ու անձրև՝...

Սիրտըս տանջում է ինչ վոր անուրախ
անհանդատություն...

Սպասիր, լսիր... յես չեմ կամենում
Անցած լույսերից, անցած հույզերից
տառապել կրկին.

Նայիր, ախ նայիր՝ ցավում է նորից
իմ հիվանդ հոգին...

Անձրև է, աշուն... Ինչո՞ւ յես հիշում,
Հեռացած ընկեր, մոռացած ընկեր,
ինչո՞ւ յես հիշում.

Դու ախտեղ եյիր, այն աղմկահան
հիշանքի մշուշում...

Դու կյանքն ես տեսել, դու կյանքն ես հիշում—
Վոսիկ տեսիլների, անուրջների լո՛ւյս...

Յես ցուրտ մշուշում.

Իմ հոգու համար չկա արչալույս—
անձրև՝ է, աշո՛ւն...

Ինձ թաղեք, յերբ կարմիր վերջալույսն է մարում,
Յերբ տխուր դժբախտով արեգակը մեռնող
Սարերի արծաթե կատարներն է վառում,
Յերբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղեք, յերբ տխուր մթնաշաղն է իջնում,
Յերբ լուռ են որվա աղմուկները զվարթ,
Յերբ շողերն են մեռնում, ծաղիկները—ննջում,
Յերբ մթնում կորչում են լեռ ու արտ:

Իմ շիրմին դարկացած ծաղիկներ ցանեցեք.
Վոր խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք.
Լուռթյո՛ւն, լուռթյո՛ւն, լուռթյո՛ւն անսահման...

Կ Ա Ր Ո Տ

Իմ անկերջ ճամբի տանջանքից հողնած՝
Յես ննջել էյի վոսկեղեն արտում.
Ու ճշաց սիրտըս վայելքից անկարծ
— Թվաց վոր մեկը կանչում է տրտում...

Յեվ յես արթնացա խնդության ցավից.—
Պիչերվա հովն եր լալիս դաշտերում,
Մութ հեռաստանն եր դժկամ նայում ինձ,
Մենակությո՛ւնն եր քարի պես լռում...

Ի Ր Ի Կ Ն Ա ժ Ա Մ

Շուտով կըլոն աղմուկը դաժան,
Ու սիրալուս կըղղա քայլերդ փափուկ.
Դու նորից կիջնես, նուրբ իրիկնաժամ,
Քո խաղաղ մութով զգվող-խուսավուկ:

Տխուր թևերդ անձայն կըվոնես,
Կըղրկես հողը կանացի նաղով,
Յերկնքում անուրջ աստղեր կըվառես,
Կըլցնես հողիս անուշ յերաղով:

Ցուրտ ցերեկներից հավիտյան դժվոհ՝
Սիրաս կաթատ է քո զգվանքներին.
Դու ինձ չես խաբում, քնքույշ յերեկո,
Անուշ յերեկո, մեղմ ու մտերիմ...

Կընստեմ անկերջ, կընստեմ մենակ.
Դու կըգարվես ինձ թևերով ճկուն,
Քնքույշ կըզգվես հույս ու հիշատակ,
Կըպարզես մեղմիկ ցուքըդ իմ հողուն:

Յեւ անջատված եմ հայրենի հողից,
 Հայրենի տունըս՝ իմ սրտին ոտար.
 Ինձ այրում է միշտ մի անհաղ թախիժ,—
 Հավիտյա՜ն դյուլթող անհայտ ճանապարհ...

Հողվում են, հոսում հեղեղները մեծ,
 Մաղլցում վերև և թափարվում ցած.
 Ձմրուխտե ջրեր, ձեզ ո՞վ վրդովեց,
 Հայրենական տո՛ւն, հավետ մոռացված...

Միևնույն է ինձ հյուսիս թե հարավ,—
 Մի խենթ տաղնապ կա իմ հիվանդ սրտում,
 Կա իմ հողու մեջ մի անհաղ ծարավ.
 —Հավիտյան ոտար, հայրենական տո՛ւն...

ԱՇԵԱՆ ՏՐՏՄՈՒՅՑՈՒՆ

Il pleure dans mon coeur
 Comme il pleut sur la ville...
 P a u l V e r l a i n e

Կրկին իմ հոգում
 Իջավ մշուշոտ, արցունք անձրևող
 Տրտում իրիկուն.
 Իմ սրտում անցավ
 Մահացող ծաղկանց բույրը ցավ բերող,
 Համբույրը խոնավ.
 Կրկին պաղ միգում
 Ամպոտ յերկինքը մեռած լույսերի
 Թաղումն է սգում:
 Հողմը արարչավ
 Հողուս դալկացած ծաղիկ հույսերի
 Թերթերը տարավ...
 Անջատման ցավոտ
 Ձայներ դողացին ու հեղ դալկացան
 Հեռվում անծանոթ.
 Կրակներն անձայն
 Լացող ամպերի միգում անսահման
 Թռչնեցի՛ն, անցա՛ն...
 Անձրև անընդհատ
 Մաղում է վհատ թաղումի կոծով,—
 Իմ հողու մեջ ե՛լ
 Աչուն է իջել անամոք լացով,
 Իմ հողու մեջ ե՛լ...

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Վոչ արտո՛ւնջ, վոչ մըմո՛ւնջ սղալոր,
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ.
Իմ ուղին միշտ մթին մենավոր,
Կգնամ իմ դժկամ ցալի հետ:

Իմ ճամբան անվախճան մի դիշեր,
Ինձ շոյող վոչ մի շող չի ժպտա,—
Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր.
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ դթա...

Հուսարեկ մութ ու մեղ թող լինի,
Իմ վերև թող արև չբխեղա.
Լսկ յերկունք, լոկ արցունք թող լինի,
Ինձ այդպես քրոջ պես մի՛ դթա...

Իմ դերեղմանին դուք չըմոտենաք,
Հարկավոր չե ինձ վոչ ծաղիկ, վոչ սուգ.
Հանկարծ կըղարթնի ջերմ լալու փափաղ,
Սիրարս չի դանի վոչ մի արատուք:

Իմ դերեղմանը թող լինի հեռվում,
Ուր մահացել են շուկ, յերգ ու ձայն.
Թող շուրջըս փռվի անանց լուսթյուն,
Թող ինձ չըհիշեն, թող ինձ մոռանան:

Իմ դերեղմանին դուք չըմոտենաք,
Թողեք, վոր հանգչի իմ սիրտը հողնած,
Թողեք, վոր լինեմ հեռավոր, մենակ,—
Ձըղզամ, վոր կա սե՛ր և ցնո՛րք և լա՛ց...



ՍԵՆՏԻՍԵՆՏԱԼ ՅԵՐԳ

Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ եր, առու...
 Հեքյաթի պես եր—յերազի նման.
 Խաղաղ յերեկոն խոսում եր անձայն.
 Արդյոք հիշո՞ւմ ես.—Հեռո՞ւ յեր, հեռո՞ւ...

Արդյոք հիշո՞ւմ ես. յերկիրը պայծառ,
 Ժպտում եր սիրով հավիտենական.
 Գարունն եր յերգում ձայնով դյուլթական,
 Արդյոք հիշո՞ւմ ես. առու յեր, անտառ...

Արդյոք հիշո՞ւմ ես. դիչերն եր դալու,
 Հեքյաթի պես եր... Մնտառ եր, առու...
 Արդյոք հիշո՞ւմ ես. հեռո՞ւ յեր, հեռո՞ւ.
 Կյա՛նք, տխուր հովիտ հավիտյան լալու...

Դ Ա Ր Ձ

Մի որ առհավետ կյանքս կանխեմ
 Ու դունատ հույսի քայլերով տարտամ
 Կը գտնեմ ուղին հեռավոր քո տան
 Յեվ թույլ ձեռներով դուռըդ կը ծեծեմ:

Տխուր կը ժպտաս դու հողնածորեն
 Ու հողնածորեն դուռը կը բանաս.—
 Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս,
 Յեվ արցունքներդ հանդարտ կը ծորեն:

Յեվ թույլ ձեռքերով դուռըդ կը ծեծեմ:
 Սիրտըս կըլցնե խնդրեթյան լուսով,
 Քո սուրբ ծնկները կը դրկեմ հուսով
 Յեվ կը հեկեկամ և կը հեկեկամ...

Գ ԻՇԵՐ

Ձմրան գիշերն ե մեղմորեն ընկնում
 Յեւ մեծ քաղաքի գեմքը մշուշում —
 Յես դուրս եմ գալիս, փողոց եմ դնում
 Յեւ յերկա՛ր, յերկա՛ր մայթերն եմ մաշում:

Բարձր տների պատուհաններում
 Պայծառ լույսերը հանդչում են մեկ-մեկ.
 Յես արդեն վռչինչ չեմ մտաբերում,
 Ինձ համար չկա այսօր ու յերեկ:

Կես գիշերն անցավ... Յես տուն չեմ դնում.
 Յերկար, անդադար, մայթերն եմ մաշում.
 Շրջում եմ անլերջ, յերբեք չեմ հոգնում,
 Վռչինչ չեմ հիշում, վռչինչ չեմ հիշում...

Լապտերը միգում մաղում ե պաղ բոց,
 Յես աննպատակ շրջում եմ անլերջ.
 Յես լուռ անցնում եմ փողոցից փողոց
 Ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մեջ:



Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
 ամենին մոռանալ.

Ձրսիբե՛լ, չըխորհե՛լ, չափսոսալ—
 հեռանա՛լ...

Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
 գիշերում այս անշող

Արդյոք կա՞ իրիկվա մոռացման,
 մոռացման վոսկե շող...

Մի վայրկյան ամենից հեռանալ,
 ամենին մոռանալ.—

Խավարում, ցավերում քարանալ
 մին միայն...

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
 ամենին մոռանալ.

Ձրսիբե՛լ, չըտենչալ, չըկանչե՛լ,
 հեռանա՛լ...

14 Տ Ո Ղ

Արդյոք նորից յերազնե՞րն են թափառում,
Միւր անուշ նվազնե՞րն են ինձ կանչում.
— Դալուկ աշնան տխուր շողերն են մարում,
Սարից իջնող աղբյուրներն են կարկաչում:

Յես լսում եմ հիացմունքի մի շշուկ,
Արդյոք դո՞ւ յես նորից հոգիս մեղմ հուզում.
— Այն գիշերն է, այն հուշերն են տրտմաշուք,
Այն աստղերն են ցուրտ յերկնքում յերազում:

Յես ընկած եմ անծայր դաշտում միայնակ,
Յերազնե՞րըս, յերազնե՞րըս վոր անցան.
Արդյոք դո՞ւ յես գիշերի պես հերարձակ,
Դիշերի պես խորհրդավոր դյուլթական.
— Դալուկ աշնան մերկ անտառն է շառաչում,
Լույս հուշերի վտակներն են կարկաչում...

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարունը այնքան ծաղիկ և վառել,
Գարունը այնպես պայծառ և կրկին.
— Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

Այնպես գգվող և յերեկոն անառի,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում.
— Շուրջըս վառված և մի անուշ տապալալ,
Մի նոր հուզում և սիրտըս մըրկում...

Անտես դանդերի կարկաչն մե՛ լսում,
Իմ բացված սրտում հնչում և մի յերդ.
— Կարծես թե մեկը ինձ է յերազում,
Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք...

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քնքարույր ծաղկանց հրեղեն խաղով
 թափում են նորից անտառ ու ձորակ,
 Յեւ հեղեղները խոսուն-սառնորակ
 վողջունում են ինձ գլարթ ծիծաղով:

Ձուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
 Դարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք ես վառել.
 Իմ սրտում ել ես թեւերդ փռել,
 Ի՞նչ հոգում ել ես հրդեհել նոր սեր:

Յեւ ահա կրկին գլարթ ու ջահել,
 Դուրս յեւա տխուր մենության բանտից.
 Պայծառ աչքերդ վողջունում են ինձ,
 Յեւ յես չեմ կարող իմ ճիշդ պահել:

Բացել ես իմ դեմ վոսկեղեն հեռուն,
 Ծաղկել ես սարո՛ւմ, անտառո՛ւմ, արտո՛ւմ...
 Ուրիշ յերգեր են հնչում իմ սրտում—
 վողջո՛ւյն քեզ, արեւ, վողջո՛ւյն քեզ, դարուն...:

1909—1912

ՓՈՂՈՑԻ ՅԵՐԳԸ

Պատուհանիս տակ լալիս ե կրկին
Թափառիկ յերգչի յերգը ցավաւին,—
Տխուր այդ յերգը վաղուց եմ ըսել,
Կարծես թե յես եմ այդ յերգը հյուսել,
Կարծես թե յես եմ լալիս այդ յերգում,
Կարծես թե քեզ եմ կարոտով յերգում...



Սե գիշեր, և հուշեր և խոհեր անհամար,
Մոռացված յերազներ՝ շուշաններ թառամած.
Ոնդություն հեռացած և անցած, և անդարձ,—
Տրտմություն մենավոր, միաձայն, միալար...

Մշուշներն են սահում... Սոսափում ե ուռին...
Իմ որեր անհատնում, անխելում և անտուն.
Յնորքներ լուսավառ, ընդունայն, ապարդյուն,
Մոռացված ե հավետ արևոտ ձեր ուղին...

Սե խոհեր անսպառ, անհամար, անհամար,
Սե գիշեր, և հուշեր և հուշեր ընդունայն,
Յերազներ իմ անդարձ—ծաղիկներ իմ գարնան.
Ի՛նչ կանչով ձեզ կանչեմ, ի՛նչպես լա՞մ ձեզ համար:



Հնչում ե անլերջ աչնան թախիծով
Դաշնամուրն աշտեղ, պատի հետևում.
Հարազատ ե ինձ այդ յերգը հեծող—
Իմ անանց ցավով մեկն ել ե ցավում:

Աչնան տխրահեծ անձրևի նրման,
Անձրևի նրման լալիս են անլերջ
Այն հնչյունները մեղմ ու միաձայն
Պատի հետևում և իմ հոգու մեջ...

ԱՇՆԱՆ ԳԻՇԵՐ

Զգիտեմ՝ վորտեղի՞ց ե գալիս
 Զութակի հեկեկանքը տրտում
 Յեւ լալիս ե անվերջ ու լալիս
 Յեւ անվերջ ծավալվում իմ սրտում:

Անհույս ե այդ յերգը, վորպիս մութ
 Դիչերըս, գիչերըս աշունքվա —
 Կարծես՝ սուգ են անում և անդուլթ
 Յեւ դառը լալիս են իմ վրա...

Այնքան վիշտ կա անհույս այդ յերգում,
 Այնքան դառը տանջանք ու թախիծ,
 Յեւ անվերջ, հավիտյան ե յերգում
 Հեկեկուն այդ յերգը աշտեղից...

Յեւ ձուլված ե արդեն իմ հոգուն,
 Իմ բոլոր որերին ե ձուլված.
 Տրամոլթյուն ե իմ չուրջն ու բեկում,
 Իմ հոգում ե անվերջ սուգ ու լաց...

Ա՛խ, բոլոր կողմերում ե թախիծ,
 Ամե՛ն տեղ ե փոխած տրամոլթյուն.
 Յեւ արդյոք՝ վորտեղի՞ց, վորտեղի՞ց
 Սպասեմ ավետիք ու խնդում...

Ինձ չես սիրում, ուրիշին,
 Ուրիշին ես սիրում դու—
 Յեւլ անդոր ե ու չնչին
 Քո դեմ տանջանքն իմ հոգու:

Դու անցնում ես ամեն ուր,
 Անցնում՝ ինձ չես նկատում—
 Յեւլ դարձել եմ յես սովոր
 Քամահրանքիդ անհատնում:

Քեզ խոնարհ՝ ամեն անգամ
 Գլուխ եմ տալիս խոնարհ,
 Բայց յես աղքատ եմ այնքան,
 Այնքան թշվառ քեզ համար...

Ամենքինն ես, իմը չես,
 Ամենքինն ես սիրում դու.
 Ա՛խ, վտակով են դնում քեզ,
 Անհատ ցնորք իմ հոգու...

Դանդաղ ե քայլում հոգնատանջ իմ ձին,
 Յեւլ տաղտկալի յե այս ուղին մոլոր.—
 Չըհիչե՛լ, մերժե՛լ տենչերըս բոլոր
 Յեւլ ցնորքներըս, վոր ինձ խաբեցին:

Անհուսովթյուն ե անվերջ վհատում
 Յեւլ դառնովթյուն ե լցված իմ հոգում:
 Փռված ե խալար և մահ և անկում.—
 Ալեքլա՛ծ ես դու, հայրենական տուն...

Վորքան ել դիչերն ահալոր իջնի,
 Յեւլ ուր ել դնամ՝ դլուխ դնելու
 Հարադատ մի հող յես չեմ գտնելու
 Սև ճանապարհիս որերում դժնի:

Տանջանք են ու խոց հուշերըս բոլոր,
 Մըտքերըս ամեն— անամոք ցավեր.—
 Խալար ե շուրջըս և մահ և ավեր,
 Մութով ե լցված իմ ուղին մոլոր...

Ու քանի՜ դնում՝ այնքան անհատնում,
Այնքան ցավո՛ւտ են խոհերըս անհույս.—
Դու չկաս արդեն, դարձել ես զրույց,
Յերազ ես դարձել— հայրենական տուն...

Ահ, այս ցուրտ յերկրի անհայտում անհուն
Ընկնել և կորչել և ննջել հավետ,
Վռչնահանալ ու մոռացվել քեզ հետ,
Ավերված յերազ— հայրենական տո՛ւն...

ՏԽՈՒՐ ՅԵՐԳ

Յուրտ անձրևն ե միգում
Հեկեկում,
Տխրությունն ե յերգում
Իմ հոգում:

Ասլազա և անցյալ և ներկա
Խառնվել են իրար,
Խախտել են որերն արևկա
Ե խեղառ:

Վիճակիս ըծի տակ
Որերում
Յեա շրջում եմ մենակ
Ու լռում:

Ձեմ հիշում, մոռացել եմ արդեն
այն խոսքերը բոլոր.—
Հիմա կույր, հիմա համը եմ քո դեմ
Ու մոլոր...

Յուրտ անձրևն ե միգում
Հեկեկում,—
Տխրությունն ե յերգում
Իմ հոգում...

RESIGNATION

Այսօր գլխանք իրարու,—
 Խեղճ լինենք ու չամաչենք,
 Բախտ չբռնենք ու հեռու
 Տարիները չհիշենք:

Լուենք միայն մի մեղմող
 Լուսթյունով ու հանգչենք,—
 Բանանք սրտերըս մեռնող,—
 Վորք լինենք ու չամաչենք:

Սիրենք իրար ու ներենք,—
 Չնախատենք մեկ մեկու,
 Եւ չար սիրով չըսիրենք,
 Անչար լինենք յես ու դու:

Այսօր գլխանք իրարու,
 Այսօր իրար չտանջենք,
 Լինենք անչար և հլու,—
 Հեկեկանք ու չամաչենք...

Ա Շ Ն Ա Ն

Նորից անձրե՛, մշո՛ւշ, ա՛մպ,
 Թախի՛ժ անհուն, տխրա՛նք հեղ,
 Աչո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
 Ի՞նչ խոսքերով յերգեմ քեզ...

Քո մշուշը, քո վրսկի
 Տերևները հողմավար,
 Դյուրթանքը քո մեղմ խոսքի,
 Արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
 Վհատությանն իմ խոնարհ
 Յեւ թիկերը դողդոջուն
 Յեւ խոտերը դետնահար...

Յեւ քո յերգը թախծալի
 Իմ սրտի յերգն ե, կարծես,
 Աչո՛ւն, քաղցր ու բաղձալի,
 Ի՞նչ խոսքերով յերգեմ քեզ...



Հեկեկում ե անլերջ,
 Հեկեկում.
 Մենավոր ու վհատ
 Իմ հոգուն
 Հարազատ—
 Անհատնում, անպատում
 Կսկիծով
 Հեկեկում ե տրտում,
 Հեկեկում...

Մշուշոտ ու աղոտ որերում
 Գիշերները յերկար ու անքուն
 Փողոցում, դաշտերում, անտառում,—
 Անամոք իմ հոգում,—
 Անամոք իմ հոգում,
 Մղկտում ե անլերջ,
 Հեկեկո՛ւմ, հեկեկո՛ւմ, հեկեկո՛ւմ...

ՈՒՇԱՑԱՄ ՍԵՐ

Բուքն ե լալիս, հողմ ու ձյուն,
 Մառախուղ ե և մշուշ.—
 Ո՞վ ե անլերջ հեծեծում,
 Ո՞վ ե կանչում աշպես ուշ:

Ո՞վ ե չըջում անդադար,
 Ո՞ւմ ե կանչում հիմա նա.
 Յես հեռու յեմ, յես ոտար,
 Ասացե՛ք թող հեռանա...

Ասացե՛ք թող հեռանա,
 Թող մոռանա ինձ հավետ,—
 Անդարձություն ե հիմա,
 Զրկա դարձի արահետ:

Մեկը կորած շիրմիս մոտ
 Հեկեկում ե և յերգում.—
 Ո՞ւմ լացն ե այն, ո՞ւմ ցավոտ
 Յերգն ե ճերմակ մրրկում...

Իմ շիրիմը հեռավոր,
 Յեւ մոռացված և մենակ,
 Ո՞վ ե հուզում մենավոր
 Իր թախիծով շարունակ:

Ոտար յերկրի դաշտերում
 Յուրա դիչերում ձմեռվա
 Ո՞վ ե անքուն դեղերում,
 Անվերջ սգում իմ վրա...

ԱՆՏՐՏՆՋՈՒԹՅՈՒՆ

Արծաթաշող առուն առվին
 Ջայն ե տալիս ու յերգում,
 Անտրտունջ ե լալկան ուռին,
 Ուռին առվի յեղերքում...

Շուրջդ ահա դիչեր ու յերգ—
 Հանդի՛ստ, հեքյա՛ք ու յերա՛դ.
 Կույս—ամպերը ճերմակ ու մերկ,
 Աստղերն անո՛ւշ հեղանա՛դ:

Սիրտ իմ հոգնած, մեղմ որհնեցիր,
 Հնազանդ ու ցնորուն,
 Յերկինք ու ծով ամպ ու յերկիր,
 Այս մարդերն ու այս առուն:

Յեղիր դու ել սրայծառ ու հեղ.—
 Հեքյա՛թ, հանդի՛ստ ու յերա՛դ,
 Ծաղկանց ու կույս ամպերի պես,
 Աստղերի պես հեղանադ...

Արծաթաշող առուն առվին
 Ջայն ե տալիս ու յերգում,
 Անտրտունջ ե լալկան ուռին,
 Ուռին առվի յեղերքում...

ԱՐՇԱԼՈՒՅՍ

Դուրս յելա դաշտ—

կանաչ ծով,

կանաչ ծով եր, անափ ծով.—

Առափոտն եր ժպտում հաշտ,

Բոցալառալում նոր բոցով...

Յեւ ուղիներ բյուրաւոր,—

հեռաւոր,

կանչում եյին ակնարկում—

Նոր եր սերըս, լայն ու խոր,—

Նոր եր աշխարհն իմ հողում...

Թողի տնակն իմ ավեր,

մութ ու հին—

Ու հեռացա խնդադին.—

Անհա՛յտ, անհո՛ւն հեռուներ,

Ձեր դիրկն առեք իմ հողին...

ԳԱՐՆԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Լցվում ե փողոցն աղմուկ ու շարժում
Դալուկ դեմքերին ծաղկում ե ժրպիտ,
Փայլում են տներն արևի փոշում,
Յերկինք են պարզվում ծառերը վտիտ...
Դեռ չըջորացած բուլվարի վրա
Ճչում են զվարթ մանուկներն արդեն.
Բոլոր խոսքերը խորհուրդ են հիմա,
Յեւ հայացքները նեւ են իրար դեմ...
Մայթի քարերը հարազատ են քեզ—
Քեզ նոր ե թվում յերգը հնամյա.
Ազատ ե հողիդ անշար ե և հեղ,
Յեւ տխրությունը անուշ ե հիմա...
Ժրպտուն աղջիկներ՝ ծաղիկների պես,
Տիկիներ չքեղ և ծիծաղելի—
Բոլորը հիմա սիրելի յեն քեզ,
Սմեն ինչ անուշ խորհուրդով ե լի...
Մեռած սրտերն ել, ծաղիկների պես,
Բացվում են հիմա արևի փոշում,

Մի քաղցր հուզում արբեցնում ե քեզ,
Ու, հոգսով մղված՝ հոգսդ չես հիշում...

Որհնությո՞ւն քեզ, յե՛րդ և յերա՛ղ և սե՛ր,
Որհնությո՞ւն քեզ, կյա՛նք անուշ և անհուն
Որհնությո՞ւն և քե՛զ, տանջանքի գիշեր,
Յեւ յերկունք և մահ—իա՛ռք և որհնությո՞ւն...

ԹԱՓԱՌՈՒՄԻ ՍԵՐ

Կըլարժեմ նորից քայլերս տարտամ,
Լապտերների հեղ լույսը կըգրկեմ,
Զվարթ անցորդին ուրախ կըժպտամ,
Ինքս ինձ կերգեմ...

Յեւ արբած կյանքի անուշ գաղտնիքով,
Վողջույն կըտամ յես ջրին ու հողին,
Կըկանչեմ զվարթ ու արբուն յերգով
անց ու դարձողին...

Յեւ ոտար կանանց ժըպիտը ծանոթ,
Յեւ մեծ քաղաքի աղմուկի հյուսկեն—
Յերկար գիշերիս յերազում աղոտ
քունս կըհսկեն...

ՓՈՂՈՑՈՒՄ

Գիշերվա փողոցները թափուր
Շրջեցի տրտում ու միայնակ,
Խոհերով և քաղցր և տխուր,
Յերազույժ դյուլթական ու հստակ...

Աշխարհում այս աղոտ յես քնքուշ
Մի հեքյաթ հյուսեցի քո մասին,
Պատկերդ լուսեղեն ու անուշ
Պարզեցի կյանքի չար յերազին...

Մեկնեցի վիճակըս անժրպիտ
Որերիդ որորի՛ն, որորի՛ն,
Կույս հոգուդ խնդությանը վրձիտ,
Հայացքիդ տխրությանը խորին...

Անաղմուկ, անտրտունջ, անհնչյուն
Գալիս ես ու նորից հեռանում,
Ու հեռվից դյուլթում ես ու կանչում,
Լուսերե՛ս, անմարմին, անանու՛ն...

ԶՄՐԱՆ ԳԻՇԵՐ

Տխրությունս անուշ է, վորպես
Հեռավոր հեռավոր, կարկաչուն.
Այնպես մեղմ է իմ սերն ու այնպես
Անուշ է նա իմ սիրտը տանջում:

Ձեմ ուզում վոչ անցյալը հիշել,
Վոչ գալիք որերին նետել հույս,
Հանգիստ է իմ շուրջը և դիշեր,
Ու սիրտս չի տենչում արշալույս:

Անդորրել է աշխարհը բոլոր,
Դուրսը ձյուն է գալիս փողոցում
Գիշերը և հանգիստ է և խոր,
Ու սիրտս առավոտ չի ուզում:

Մաքուր է իմ հոգին, ու հիմա
Որհնում եմ վիճակըս յերկրային,
Ընդունում եմ սիրով կյանք ու մահ
Ու սիրտըս պարզում եմ աշխարհին...

Անչար է իմ հոգին ու հանգիստ,
Գիշերը անդորր է, դուրսը ձյո՛ւն.
Ննջեցեք հավիտյան, վերք ու վիշտ,
Ծալաբլիթ, լուսեղեն մենություն...

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Գարնան անուշ աղմուկով,
Գարնան յերգով դու յեկար.
Փայլով, վառքով ու շուքով,
Խնդրությունով խելագար...

Սիրտըս անուշ խոցեցիր
Արևալառ զո սիրով,
Սև որերս ալրեցիր
Գեղեցկությամբ ու սիրով:

Սիրտըս լիքն էր մութ մեզով,
Սիրտըս թույլ էր ու տկար,—
Գարնան անուշ աղմուկով,
Գարնան յերգով դու յեկար...

ԿԱՐՈՒՍԵԼ

Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Յես ըո յերգը վաղուց եմ լսել...
Հեքյաթ եր և հմայք և անծիր
Խնդություն մշուշում վարդապետին
Դու նենգոտ քնքշությամբ ժպտացիր,
Արևոտ ժըպիտով իմ հոգուն...

Սիրո խոսք և համբույր և խոստում...
—Արբեցեք այս անուշ համբերում,—
Արդյոք մե՞նք, թե՞ խոսքերն են ստում,
Արդյոք մե՞նք, թե՞ աշխարհն է յերգում:

Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Յես ըո յերգը վաղուց եմ լսել...

Վար հեռու մի յերկիր թովչական,
Արև էր վոսկեղեն աշխարհում.
Շողացին, ժպտացին— ել չկան,
Ել չըկան պատրանքները սիրուն:

Յեվ թախիծ, և տրտունջ և տանջանք,
— Դո՞ւ յես այն, թե՞ աշխարհն է լացում
Պալարի, խաբուսիկ անրջանք,
Հեռավոր որերի հիացում...

Պատվիր, պատվիր կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...

Կար մի յերգ հեռավոր աշխարհում,—
Դու աշնայերգն ես կրկնում հեռավոր—
«Յես սիրում եմ, դու ինձ չես սիրում»,
Յեվ հին են քո խոսքերը բոլոր...

Յեվ այն վալ'սը—«անդարձ ժամանակ»,
Ծառուղին ամայի պուրակում,
Յեվ գիշեր, և համբույր և լուսնյակ...
Տաղտկալի՛, ձանձրալի՛ պատմություն...

Պատվիր, պատվիր, կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...

Պարում են խելագար խնջույքում,
— Ով կուզե՛ թող գաղտնիքն իմանա,—
Վոչ պերջ կա, վոչ սկիզբ այս յերգում,
Յերեկ յես, այսօր դու, վաղը նա...

Պատվիր, պատվիր, կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...

ՇՆՈՒԿ ՈՒ ՇՐՇՈՒՆ

Աչնայն մշուշում շշուկ ու շրշում,
— Բարդիններն են բաց պատուհանիս տակ
Դու յես, վոր դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:

Սնտես ու հուշիկ իմ շուրջը շրջում
Յեվ շնջում ես և անուշ շրջում,
Պայծառ տրամուլթյամբ ինձ ես անընդամեն
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում:

Սմայերը ճերմակ յերամով անցան
Թռչունների պես,— լուսեղեն յերա՛դ,—
Դու յես, վոր դարձյալ ժպտացիր անձայն
Գո հեռու հեռալից անհայտ ու անհաս:

Ջրերն են անվերջ միգում հեկեկում,
— Իմ սիրտն է լալիս կարոտով անհուն,—
Թվում է, վոր դու տխրությամբ անընդ
Ինձ ես վորոնում աղոթ աշխարհում:

Յեվ ժպտում ես ինձ, ակնարկում քնքռել
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում,
Յեվ շնջում ես և շրջում անուշ,
Սնտես ու հուշիկ իմ շուրջը շրջում:

ԱՐԵՎԱԾԱԳ

Յեա կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
 Բա՛րձր, բա՛րձր,— հեռավոր ու մենավոր.
 Այնտեղ, ցածում, դեռ նիրհում են դաշտ ու ձոր,
 Դեռ խավար ե այնտեղ դաժան ու լուին:
 Սակայն՝ շուտով կատարներեց հեռանիստ՝
 Արևն այնտեղ հուր կըթափե և վոսկի,
 Յեւ կըցնծան դաշտերը լուռ ու հանդիստ,
 Յերկիրն անհուն կարոտ կյանքի ու խոսքի:
 Յեւ դու կերգես, զարթնած աշխարհ, իմ առաջ,
 Կարձաղանքես իմ վողջույնին սիրառատ,
 Կըլսեմ յես դարձյալ աղմուկ ու շառաչ
 Ու կըսիրեմ հեքյաթային առորյադ:
 Լուսլթյուն ե, մութ ե այնտեղ, սակայն իմ
 Սրտում արդեն արշալույս ե՝ հարուստ՝.—
 Վողջույն ձեզ մութ ուղիներում յերկրային,
 Իմ յեղբայրներ, հեռուներում և բանտում...

ՎԵՐԱԴԱՐՁ

1

Մենության խավար գնդանից կրկին
 Յես վերադարձա հզոր և հպարտ,
 Յեւ ինձ վողջունեց աղմուկը գլխաթթ,
 Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Անխոս տանջանքիս գիշերում անքուն
 Իր հուրը վառեց մի պայծառ կարոտ,—
 Նոր սիրով լեցուն՝ դարձա յես ձեզ մոտ,
 Յեւ նոր յերգեր են հնչում իմ հոգում:

Յեկա, վոր այստեղ ձեզ համար այսօր
 Հրեղեն խոսքեր կուեմ և խնդում,
 Լսեմ հաղթական մարտի ցնծություն,
 Տեսնեմ շարքերը ձեր հզորագոր:

Յեւ լուսաբացին, յերբ հոգնած լինեք,
 Յերբ քնած լինեք՝ թշնամուց խաբված,
 Արևածագի ցնծությամբ արբած,
 Կանչեմ ձեզ, ճչամ՝ յեղբայրներ, յեղե՛ք...

Միշտ նույն խոհերի չչուկին հլու,
 Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝
 Յեա դուրս եմ դալիս նորից շրջելու
 Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:

Շփոթ նվազով աղմուկ ու սուլոց
 Շարժում են առաջ որը ժրաջան—
 Բոցոտ խնջուկքում, ձուլված խինդ ու կոծ,
 Հյուսել են կյանքի կախարդված շրջան:
 Հապճեպ հոսանքում և մարդ և անիվ
 Ալեկոծությամբ մի խայտանկար
 Խենթ փողոցների բավիղներն անթիվ
 Զրերի նման խառնում են իրար:
 Ամեհի ձայնով յերկաթն է խոսում,
 Պողպատն է ճչում շաչյունով դողդոջ—
 Յեվ բաղմաղաղակ որերի լեզուն
 Հնչում է այստեղ, վորպես մարտակոչ:

Այս աղմկահայտ կյանքի խենթ բոցում
 Այրում է սիրտըս սրբազան մի դող,
 Հուզում է հոգիս մի վեհ հիացում,
 Յեվ սարսափելին թվում է դյուլթող...

Մաշված և կյանքս վշտում անաղարտ
 Յեվ տառապանքի որերում համառ,
 Բայց ցաված սիրտըս բացել եմ հպարտ
 Նորից ու նորից սիրելու համար:
 Ուզում եմ, վաղվա ցնծության դուշակ,
 Կարոտըս նետած լուսեղեն հեռուն,
 Վառել յերգերըս, վորպես դրոշակ,
 Ու մեռնել, վորպես հերոսն է մեռնում...

Զարթե՛ք, յերգեր իմ, ժամ է հնչելու,
 Զինելու նորից զնդերը ցրիվ,
 Մեռած սրտերը կյանքի կոչելու
 Յեվ բորբոքելու զայրույթ ու կռիվ...

1913—1919



Դարձյալ իջաւ գիշեր, դարձյալ — ու կրկին
Մենակ ես դու, ինքդ քո դեմ մերկ ու քաջ.
Ու նորից դու շփոթմունքով ցավագին,
Յերկյուղով ես, յերկյուղով ես դու լցւած:

Վորպես տերէն աշնամուտի՝ հողմի դեմ,
Դողում ես դու, վորպես շուշը յեղեգի.
Ինքդ քո դեմ դու անդոր ես ու անգին,
Ինքդ քո դեմ, ինքդ քո դեմ, իմ հողի...



Սրտակեզ կսկիծ մի հին,
 Վոր անդուլ սարդի նման
 Հյուսել է հրե վոստայն,
 Մաշում է հար իմ հոգին:
 Աւ վորպես անդեղ մի ախտ,
 Հին ցաւ մի, թունոտ մի խոց,
 Մթամած, ազահ մի բոց
 Կիզում է կյանքըս անբախտ:
 Գնում եմ ուղին իմ ծուռ
 Յեւ դիտեմ՝ դեպի կորուստ.
 Նիշված է բախտըս վերուստ
 Յեւ չկա փրկության դուռ...



Տնակն իմ ցուրտ ու անզարդ
 Որերըս համր են հոսում.
 Զնկերըս դարչ մի, դեշ սարդ
 Վոստայն է, չարը, հյուսում.
 Հյուսում է ցանց իմ սրտում
 Կիտում է թոզն իմ հոգում
 Արյունըս նա յե արթուն
 Քամում միշտ համր ու տոկուն.
 Մեռնում եմ՝ լուռ ու դժվար
 Անցնում եմ՝ հուր մի անուշտ,—
 Իջնում եմ սև մի աշխարհ,
 Չար խոց են և միտք, և հուշ...



Մտքերից այս տարամերժ
Աղատեցե՛ք ինձ,
Մորմոքումից այս անվերջ,
Անանց այս ցավից.
Խորն ե խոցն իմ և աննինջ
Ու սրտակեղեք,
Բուժեցե՛ք ինձ սիրով ջինջ
Յեւ լալի յեղեք.
Ուխտել եյի ընդունել
Տանջանքը— խնդում,
Բայց մոլորվեց սիրտս անել
Խոհերի բանտում.
Յես սլարտվեցի մութ մարտում,
Ընկա չար խոցված—
Չեմ հավատում ել մարդուն
Յեւ չունեմ Աստված...



Դուրսը՝ մայիսն ե, արբածը.
Դուրսը՝ խնդում ու աղմուկ.
Յուրա ե զնդանը մեր, թաց ե.
Սիրտ իմ, անբախտ դու մանուկ.
Լույս ե յերկինքն ու վողոցը
Դուրսը՝ դարուն ե անմութ.
Դառն եմ հուշերը մեր, խոց եմ,
Վողջը անխինդ ու անգութ.
Սիրտ իմ, հիվանդ իմ, բալիլ իմ,
Որը մեր, տունը մեր՝ ցուրտ.
Յավ ե անցյալն ու դալիլը,
Յավ ե յերազ ու խորհուրդ...



Յուրա հոկտեմբերն է ծեծում իմ դուռը
Յեւ մրրկում է հողմը գիշերըս.
Բոլորն անդոր է, բոլորն իզուր է
Յեւ անամոք է, վորպես հուշերըս:

Քամին ծեծում է, ցրում թերթերը,
Մի չար արև է այրել յերկիրըս.
Մերկ անապատ են դարձել արտերը,
Վողբի նրման են բոլոր յերգերըս:

Թույն ու թախիծ են անյեղծ հուշերըս,
Մութ մտքերին իմ հոգիս ավար է.—
Ալեկոծում է հողմը գիշերըս.—
Անծայրածի՛ր է, սիրտ, քո խալարը...



Անդարդ իմ որվան, անտուն իմ կյանքին
Դեռ չատ է դալու և բոց և աղետ.
Մինչև աղատվի հրկեղ իմ հոգին,
Հարուժյուն առնե մոխրից առհալետ.
Մինչև դադարի մրրիկն այս մթին,
Մինչև հանդարտեն շուկներն այս չար
Ու վատնեմ առատ իմ դանձը հետին
Յերկրային միգում յերկունքով հոժար.
Թող դան—պատրաստ է սիրտըս և հլու,
Վորպես նորահարսն ահով մի խնդուն
Մանում է մահի՛ճ—այնպես տանջվելու
Գնում է հոգիս հրճվանքով անհուն...



Վոսկեհանդերձ յեկար և միզասքող,
Տխուրաչյա աշուն, սիրած աշուն.
Տերեններիդ դանդաղ թափվող վոսկով,
Մետաքսներով քնքշաշրշուն:

Նայածներով խորին, յեկար, ներո՞ղ
Յեկար կրկին գերող, խորհրդավո՞ր.
Յեկար հուշիկ, անչար ավաղներով
Որորներով ամենորոր:

Քո արևին հատնող և քո յերգին, յերգին
Յեվ շրջունիդ փափուկ, և բեկումիդ—վողջու՞յն.
Ո, հարադա՛տ, սիրա՛ծ, յեկա՛ր կրկին,
Իմ քնքշագի՛րն աշուն...



Մաշում ե իմ սիրտն անդադար
Հին յերգ մի՛ ծանոթ ու տրտում.
Կիզում ե կարոտ մի արթուն,
Մաշում ե իմ սիրտն անդադար:
Դրժել եմ կարծես մի յերդում,
Մի ուխտ եմ թողել անկատար,
Մաշում ե իմ սիրտն անդադար
Հին յերգ մի՛ ծանոթ ու տրտում:

ՊԱՈԼՈՅԻՆ

Դու գիտես վոր բոլորն ապարդյուն,
 Բոլորը «կատակ ե հիմար».
 Բայց պահում ես խոհերդ տրտում
 Ու գնում ես համառ:
 Դու գիտես, վոր մոտիկ են հիմա
 Որերը հանգիստ ու անվերջ,
 Բայց գնում ես անդուլ... Գնա,
 Մոտ ե որը հավերժ...
 Ախ, մոտ ե որն այն անանց
 Յեվ գիտենք—կըզա արագ.—
 Բայց դու դեռ սիրում ես կանանց
 Իրանն ու ձեռքը բարակ...

Նույնն ե հասցեդ հնամյա,
 Նույնն ե՝ ոթեւը «Պարիժ».
 Բայց տրտմությունըս հիմա.
 Այլ ե, կարոտըս՝ ուրիշ.

Նույնն ե խանութը դեմի,
 Նույն ցուցանակը հիմար.
 Նույն մեղմախոս վերլենի
 Յերդն ես կրկնում դու համառ:

Գուցե այստեղ դտներ իմ
 Սիրտը չըջիկ ու մոլոր
 Յեվ խնդություն մի վերին,
 Յեվ ամոքում, և որոր,

Բայց հեռանում եմ անկամ.
 Ի՞նչն ե վանում ինձ, ինչո՞ւ:
 Մի՞տդ ե, ինչպես մի անգամ
 Ինձ առացիր դու «գնչու»...

Ն Ա Մ Ա Կ

Դուք մոռացել եք այն «հանաքները»
 Յեվ համբույրներն այն, և սերն ամեն.
 Իսկ իմ սրտից այդ հիշատակները
 Վորքա՞ն արցունք դեռ պիտի քամեն...
 Ձեզ համար սերը՝ «հաց ու պանիր է»,
 Այսօր այստեղ եք—եղուց այնտեղ.
 Իսկ յես պահում եմ Ձեր սովախները,
 Վորպես ծաղիկ մի՛ սուրբ ու աննեխ:
 Ծիծաղելի յեն Ձեզ այս խոսքերը,
 Ծիծաղելի յեմ յես և հիմար.
 Հիշո՞ւմ եք, ինչպես մի որ «Հասկերը»
 Նվիրեցիք ինձ ծաղրի համար...
 Յես «յերեխա» յեմ—դուք միշտ կրկնում եք:
 Վոչ, հայ աղջիկ եմ՝ պարզ ու պարկեշտ:
 Իմ ցնորքները կծու հեղնում եք
 Յեվ յերգում սերը՝ աղատ ու հեշտ:
 Ձեզ համար սերը՝ հաց ու պանիր է,
 Այսօր այստեղ եք—եղուց այնտեղ.
 Իսկ յես պահում եմ Ձեր սովախները,
 Վորպես ծաղիկ մի՛ սուրբ ու աննեխ...



Ախ, Բուզուլուկ քաղաքում
 Նստած ես հիմա,
 Ինձ ես մնում դու անքուն
 Ո, պրինցուհի Նա:

Ինձ ես անվերջ յերազում
 Փայտե դղյակում
 Յեվ դիչերն ե արտասվում
 Քո Բուզուլուկ քաղաքում:

Բայց յես չեմ դա բաղխելու
 Դուռը դղյակիդ.
 Յես հեռու յեմ, յես հեռու
 Յնորքը կյանքիդ:

Անուրջներով միամիտ,
 Մտքով նվազուն,
 Ինձ ես պարզել պարզ հոգիդ
 Քո Բուզուլուկ քաղաքում:

Շուտով արևն այդ միզում
 Յերեկ կըղառնա,
 Դու նստած ես դեռ անքուն,
 Ո, պրինցուհի Նա...

Պ Ա Ո Լ Ո Յ Ի Ն

Յեկան որեր ու անցան ու ինձ վռչինչ չըմնաց.
Հուրե՛ր, հուրե՛ր—ծիածան ու ինձ վռչինչ չըմնաց:

Գարնան անուշ ծաղկանց պես, վարդերի պես
Հրահրուն,
Հողմով ետարված հեռացան ու ինձ վռչինչ չըմնաց:

Ու նոքա վոր սիրեցին—սիրտըս նրանց չըտվի.
Գնացին ու չըդարձան ու ինձ վռչինչ չըմնաց:

Յեվ նոքա ում սիրեցի իմ ցավով ու խենթությամբ
Արեցին ու մոռացան ու ինձ վռչինչ չըմնաց

Ձմեռ իջավ իմ գլխին և ցուրտ, և խոր, և անդորր,
Աղբյուրներըս չորացան—վռչինչ, վռչինչ չըմնաց...

ՀՐԱԺԵՇՏԻ ԳԱԶԵԼ

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ յես մնաս
բարով:

Բորբ արեին իմ թոց սրտում ասում եմ յես մնաս
բարով:

Մնաք բարով, ասում եմ յես, բոլոր մարդկանց՝ չար
ու բարի,

Տանջվող ու վորբ Աղամորդուն ասում եմ յես մնաս
բարով:

Մնաք բարով, ասում եմ յես, ընկերներիս՝ մոտ ու
հեռու,

Վոսոխներին՝ չար ու արթուն, ասում եմ յես մնաք
բարով:

Յերկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու
մթին,

Գարնան ամպին լույս վռչորտում, ասում եմ յես,
մնաք բարով:

Վոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտառներին վոսկի արտում, ասում եմ յես, մնաք
բարով:

Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ խլրտուն, ասում եմ յես, մնաք
բարով:

Գնում եմ յես մի մուժ աշխարհ, հեռու յերկիր, ել
չեմ դալու.
Ֆարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք
բարով:

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1

Սիրտըս ջահել ե նորից,
Սիրտըս դողում ե քո դեմ,
Սիրտըս գերված ե արդեն,
Սիրտըս ջահել ե նորից:
Սիրտըս, թափուն բոլորից,
Սուբ ե մեխված իմ կրծքին,
Սիրտըս ջահել ե նորից,
Սիրտըս սիրում ե կրկին...

Հուր ես հագել հրեղենը
 Ալբարդը՝ կարմիր կրակ,
 Նազում ես այնպես բարակ,
 Հուր ես հագել հրեղենը:
 Նիզակը դարձ հրաղենը,
 Կիզիր իմ հոգին, ո հրակ.
 Հուր ես հագել հրեղենը,
 Ալբարդը կարմիր կրակ...

Նետում ես վոսկի նետերը
 Հուրերը—վոռպես արև
 Յես ղեմը—դողդոջ տերև,
 Նետում ես վոսկի նետերը:
 Դու բոց ես, յես խենթ թիթեռ եմ
 Դու վառ ես դու հրաթև,
 Նետում ես վոսկի նետերը
 Հուրերը վոռպես արև:

Խոր են քո հուր աչքերը,
 Հուրըդ իմ հուրն ե այրում,
 Սիրտըս յերգում ե հրում,
 Խոր են քո հուր աչքերը:
 Հուր են քո սուր տեղերը,
 Հուրըդ վառված իմ հրում,
 Խոր են քո հուր աչքերը,
 Հուրըդ իմ հուրն ե այրում:

Հրով արթնացած սիրտըս,
 Սիրտըս բացված հրավարդ:
 Լի'ց քո կրակը զվարթ
 Հրով արթնացած սիրտըս:
 Քո դեմ յերկյուղած սիրտըս,
 Կիզի՛ր, վորսկան հըպարո
 Հրով արթնացած սիրտըս,
 Սիրտըս բացված հրավարդ:

Այնպես որորուն ե քայլըդ,
 Սերըդ՝ ահեղ ու բորբոք.
 Մաշիւ հողիւ անողոք,
 Այնպես որորուն ե քայլըդ:
 Այնպես հրահրուն ե փայլըդ,
 Նայվածըդ՝ այնպես չող,
 Այնպես որորուն ե քաղիլդ,
 Սերըդ՝ ահեղ ու բորբոք...

Դի՛ր քո կնիքը սրտում իմ,
 Նիշըդ՝ անյեղծ ու անջինջ.
 Ո՛ր, հրեղեն դու և ջինջ,
 Դի՛ր քո կնիքը սրտում իմ:
 Քեզ իմ աղովթքն ու յերդումը,
 Քեզ պատարագ՝ ամեն ինչ.
 Դի՛ր քո կնիքը սրտում իմ,
 Նիշըդ՝ անյեղծ ու անջինջ...

Ձեմ տա յերբեք անունըդ
 Մութ աշխարհի աչս հիշում.
 Բոց ե անունըդ հնչուն—
 Ձեմ տա յերբեք անունըդ:
 Թող ինձ այրե սամումըդ,
 Սերըդ վոր սիրտ ե փշրում.
 Ձեմ տա յերբեք անունըդ
 Մութ աշխարհի այս փոշում:

Չունի ե պարսից արքան
 Վորքան պոետն անտուն,
 Այնքան դանձ ու խնդում
 Չունի ե պարսից արքան:
 Հարուստ ե պոետն այնքան
 Յերկրի միջին բանտում...
 Չունի ե պարսից արքան
 Վորքան պոետն անտուն...

Վորպես մաղամ Բովարին
 Սիրտ իմ լի յես տաղնապով,
 Ունդով խնդուն ու խաբող,
 Վորպես մաղամ Բովարին...
 Յե՛վ ոտար ե բոլորին
 Կրակն այդ խենթ իր թափով,
 Վորպես մաղամ Բովարին
 Սիրտ իմ, լի յես տաղնապով:

Յես չեմ հողնել սիրելուց և յերգերից, և ցավից,
 Ուղիններից անձանոթ, աղետներից նորանոր.
 Վողջո՛ւյն նորից ու նորից, նո՛ր խնդություն, նո՛ր
 թախիծ

Յե՛վ առափոտ անստվեր, և մեջդիչեր սեպիոր:
 Սիրտ իմ, բաց ես աշխարհի և չարի դեմ, սիրտ իմ,
 բաց,

Աշխարհն՝ արև, աշխարհն՝ ամպ, սիրտ — աղբյուր
 ես դու զուլալ:

Սիրտ իմ, հաղար ցնորքով, հաղար յերգով ես
 արբած,

Վիճակված ե քեզ հնչել—յերգով խնդալ, յերգով լալ:
 Ու խընդում ե լացըդ պարզ և խնդումը՝ լացի պես,
 Տխրություն ե ամեն ինչ— յերազ ե և մոռացում:
 Բացված ես դու, սիրտ իմ, նուրբ շուշանի պես,
 ծաղկի պես

Յե՛վ արևն ե այրում քեզ և մըրելին ե քեզ ծեծում:



Աչուն ե, որերը ցրտում են,
Գիշերը սուղվում ե միգում.
Այնքան քնքշություն կա սրտում իմ,
Այնքան մեղմություն իմ հոգում,
Այնքա՛ն տխրություն ե անուշ ե,
Անուշ ե այս ցավը հետին.—
Բոլորը յերազ ե և հուշ ե,
Վասկի յե— թափվում ե դետին...



Սիրում եմ յես նրանց, վորոնք խենթ են ու անտուն,
Նրանց, վորոնք կայան չունեն և չունեն խնդում:

Կորածներին, չըջիկներին, մանուկներին վորք
Յե՛վ այն կանանց, վոր նայում են անամոթ ու ցուփ:

Նրանց, վորոնք մահն աչքերում— գիշերում խավար
Թափառում են դաղտնադողի և փնտռում ավար:

Նրանց, վորոնց մեռած սրտում արդեն սեր չըկա,
Նրանց, վորոնք— մահու սրբալիք— չար են ու
ազա՛հ...

Ախ, կուզեյի յես հարազատ և ընկեր լինել
Նրանց, վորոնք մոռացված են բանտերում անյել:

Յե՛վ կուզեյի յեղբայր լինել նրանց, վոր մթին
Չարչարանքում կորցրել են կրակը հետին:—

Յե՛վ անառակ իմ յեղբոր հետ ցանկապատի տակ
Կուզեյի յես մեռնել անբախտ և անհիշատակ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Ս Ո Ն Ե Տ

Մառախուղներ՝ ծանր ու մռայլ բոլորած,
 Յուրա կրակներ՝ ահաբեկ ու դողդոջուն,
 Նեվա՛ն, Նեվա՛ն, մի՛շտ դավադիր չի ննջում,
 Վետերը՝ մութ ոճանման վոլորած:
 Յեվ պալատներ— արյունաներկ անրջում—
 Արքայական— սեպորհուրդ ու սառած—
 Բյուր աչքերը խոժոռ ու չար սևեռած
 Դիվային ինչ վոճիրներ Վն անրջում:
 Ու յերկինքն՝ ամպ, վոր հենվել է սև դետին,
 Հայացքով իր անասող, անխինդ ու մռայլ
 Նայում է միշտ այնպես ցուրտ ու անայլայլ,
 Վոր անսիրտ՝ աչքըդ նետում էս դետին:
 Բայց դյուժիչ է մղձավանջն այս դժնաքայլ,
 Վոր դրվում է քեզ ահերով իր միջին...



Հողների դրժերից անհամար,
 Աշխարհից այս խավար ինձ տարեք,
 Ինձ տարեք այս յերկրից անարեգ:

Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ
 Մեր սարերն անառիկ, վեհանիստ,
 Մեր արտերն արևոտ ու հանդիստ:

Փրկեցե՛ք մտքերից այս անծայր,
 Փրկեցե՛ք խոսքերից այս խելոք,
 Դարձրեք ինձ մանուկ ու անհուգ:

Փրկեցե՛ք սրերից այս սուբասյր,
 Խորախոց խոհերից լմաստուն,
 Մեր արտերը տարեք, տարեք տուն...



Դ՞նչ մնաց ինձ—վոսկյա մի ցանց, ուրիշ վոչինչ,
Մարգարտաշար հուշերի գանձ,—ուրիշ վոչինչ:

Տրտամ գիշեր և մենություն անողնական,
Սիրտ կեղեքող կարոտ անանց,—ուրիշ վոչինչ:

Յերագներից իմ հրավառ—մնաց փոշի,—
Սին անուններ կորած կանանց,—ուրիշ վոչինչ:

Ձինջ իմ հոգուն—մնաց մշուշ, ծանր ու մթին
Տեղ իմ այգում՝ քամու կաղկանձ,—ուրիշ վոչինչ:

Պարի՛ր, քամի այգում այս մերկ, վռնա՛ ու լա՛ց,
Տա՛ր, մի՛ թողնիր, քամի անսանձ,—
վոչինչ, վոչինչ...



Տեսա յերազ մի վառ.
Վոսկի մի դուռ տեսա,
Վըրան փերո՞ւղ կամար,
Սյուները՝ հուր տեսա:
Տեսա ծաղկած այգին,
Սոսի սուրբ ծառ տեսա.
Մի հրեշտակ անդին
Սոսից պայծառ տեսա:
Յերկու բաժակ տեսա,
Վոսկի գինին եր վառ.
Յերկու նիղակ տեսա,
Յերկու անդին դոհար:
Սիրտը՝ խոցված տեսա:
Վերքիս արյունն եր վառ.
Դահճիս կանգնած տեսա,
Ասի՛ արևըս առ...



Թողի յերկիրն իմ հայրենի,
 Անահ անցա Արար ու Հինդ.
 Տեսա մարդիկ չորսգլխանի,
 Տեսա հաղար աղետ ու խինդ:
 Հասա մինչեւ Չինոմաչին,
 Հասա մինչև ծովը Ճերմակ,
 Տեսա յերկրի ծայրը վերջին
 Յեւ զբախտի դուռը՝ կրակ:
 Հաղար անգամ ծագեց Արև
 Յեւ մայր մտավ հաղար անգամ,
 Տեսա ծառեր հըրատերև,
 Տեսա ակունքն արեգական
 Յեւ փերիներ քնքույշ ու սև
 Աչքերը՝ բոց, իրենք՝ խավար
 Յեւ փերիներ տեսա թեթև
 Փրփուրի պես՝ ճերմակ ու վառ...

Բոլորը՝ ծուխ, բոլորն ավաղ,
 Բոլորն՝ ավար ջուր ու քամուն.
 Չըկա՛ քեզնից դերիչ յերա՛զ,
 Քո անունից անու՛շ անուն...



Քնքո՛ւյշ դու, լուսե աղջիկ ես,
 Արտո՛ւտ ես, վոսկե թռչնակ ես,
 Չար նետը թող չդիպչի քեզ,
 Աչուն ու ձմեռ չըգա քեզ:
 Թող սիրաբղ մնա խնդուն հար,
 Հողին քո—լուսե թիթեռը—
 Խաղա՛ հար և հուրհուրա՛ վառ,
 Չար հուրը չայրե թևերը:
 Հրե՛ դու, արևային դու,
 Մաքո՛ւր դու, լուսե հասմիկ ես,
 Անմար թող ցուլա քո խինդը,
 Չար աչքը թող չըտեսնի՛ քեզ...



Կանգնել ես դու նրբահասակ,
 Ժպտում ես ինձ, զերում ես ինձ,
 Պարզել ես ինձ յերկու նիղակ,
 Յերկու հրով այրում ես ինձ:
 Նազով նրբին ասում ես՝ յեկ.
 Այնպես անուշ նայում ես ինձ.—
 Խուրձ—խուրձ թափած՝ մի սև արեղ—
 Շող—մաղերով այրում ես ինձ:
 Պարզվում ես ինձ, սիրուց զինով՝
 Քնքուշ ձայնով կանչում ես ինձ,
 Արբած եմ յես անուշ թունով,
 Ախ, ինչ անուշ տանջում ես ինձ...



Այնպես նազիկ, այնպես թեթև, այնպես որոր
 Քայլում ես դու:
 Վասկեղուսիկ, ո, հրաթև, այնպես բոսոր
 Փայլում ես դու:
 Դու վիթ ահոտ, դու խուսափուկ, այնպես անուշ
 Նայում ես դու:
 Յեկ այնպես տոթ, այնպես վափուկ, այնպես քնքուշ
 Փայում ես դու:
 Նայվածչդ՝ տեղ, ժպտալդ՝ նետ, ո, խնայիր,
 Խայթում ես դու:
 Ինքըդ՝ արեղ, սերըդ՝ աղետ, ո, մի՛ նայիր,
 Դյուլթում ես դու:
 Աշխարհն ամեն զո վոտի տակ—թաղուհու պես
 Տիրում ես դու:
 Ո, հրեղեն, չար արեղակ, ում վոր նայես—
 Այրում ես դու...



Դուք մի հին վեպ եք դանդաղ թերթում
 Այնպես հողնած ու այնպես տրտում.
 Արդյոք ո՞ւմ վիշտն է, ո՞ւմ ցավագին
 Կարոտն է կիզում Ձեր պարզ հոգին:
 Յեա ձեզ սիրում եմ, յերբ Դուք, Տիգրին,
 Կարծես հիշում եք մեռած մեկին
 Ու յերբ նայում եք այնպես մաքուր
 Քեզ այնպես հեղ եք ու այնպես քույր.
 Կարծես հեռից եք հեռա խոսում,
 Կարծես յերազ եմ Ձեր յերազում,
 Անես մի գիրք եք կարծես կարդում
 Յեզ կիսանիւթ եք և կիսաթուրն:
 Կրակն անցնում է բուխարու մոտ,
 Ախ, ինչ անուշ է լույսում աղոտ...



Ձեռներում ձեր մանրիկ, նվազուն,
 Ձեր ձայնում, յերբ առում եք «Տերյան»,
 Ձեր բարակ ժրպիտում նախրյան—
 Մի թախիծ կա մեղմած ու թագուն:
 Ծուրթերում Ձեր մաքուր ու բուրյան,
 Ձեր պարում հեղանազ ու ճըկուն,
 Հաչտորեն խոնարհված Ձեր հոգում
 Նախրյանն է յերգում, հնորյան...
 Յերբ կղիում եք Ձեր միշտ հրախանդ
 Նայվածի բոցերով մթամած,—
 Ուղում եմ որոնել Ձեզ կամաց,
 Փայլալիկ յերգերով տնավանդ,
 Տխրությամբ հնազանդ ու մեղմած,
 Նախրյան նվազով իմ հիվանդ...



Մի՞թե վերջին պոետն եմ յես,
 Վերջին յերգիչն իմ յերկրի.
 Մա՞հն ե արդյոք, թե նի՞նջն ե քեզ
 Պատել, պայծա՞ռ Նաիրի:

Վտարանդի, յերկրում աղոտ,
 Լուսե՞ղ, քեզ եմ յերազում
 Յեվ խոցում ե, և այրում.
 Արքայական քո լեզուն:

Հնչում ե միշտ խոր ու պայծառ
 Յեվ խոցում ե, և այրում.
 Արդյոք բոցե վարդե՞րդ եմ վառ,
 Թե վերքե՞րն իմ հրահրուն:

Ահով ահա կանչում եմ քեզ՝
 Յուլա՛, ցնո՛րք Նաիրի՛,—
 Մի՞թե վերջին պոետն եմ յես,
 Վերջին յերգիչն իմ յերկրի...



Այնպես անխնդ եմ և նրման լացին
 Յերգերն իմ յերկրի, այնպե՛ս տխրադին.
 Մեզ չի՛ հասկանա ոտարերկրացին,
 Մեզ չի՛ հասկանա սառն ոտարուհին:

Այն մեղամաղձիկ, լացող, միայլար
 Յելեկեջները ներդաշնակ այնպես
 Յեվ հարազատ եմ սրտին մեր մոլար,
 Հողուն մեր բեկված, ավերված, հրկեզ...

Տեսնում եմ ահա՝ դյուղերը մեր խեղճ
 Յեվ թուխ դեմքերն այն տխրության սովոր,
 Իմ Ժողովուրդը՝ անյեկ վշտի մեջ,
 Յերկիրն իմ անբա՛խտ և աղետալո՛ր...

Թող հնչե յերգն այդ դառն ու ցավածին,
 Յերգը հայրենի, ցավադար ու հին,
 Մեզ չի՛ հասկանա ոտարերկրացին,
 Մեզ չի՛ հասկանա սառն ոտարուհին...



Կարծես թե դարձել եմ յես տուն,
 Բռնորն առաջվանն ե կրկին.
 Նորից դու հին տեղը նստում,
 Շարժում ես իլիկը մեր հին.
 Մանում ու հեքյաթ ես ասում,
 Մանում ես անվերջ ու արագ,—
 Միրում եմ պարզկա քո լեզուն,
 Ձեռները մաշված ու բարակ:
 Նայում եմ մինչև վոր անգոր
 Գլուխը ծնկիդ ե թեքվում,
 Նորից յես մանուկ եմ այսոր,
 Դրախտ ե նորից իմ հողում:
 Արևը հանդիպում ե հեռվում,
 Գետից բարձրանում ե մշուշ,
 Հեքյաթը անվերջ որորում,
 Իլիկդ խոսում ե անուշ...



Հիշում եմ՝ ինչպես այն ուշ
 Աչունն եր վռակեվորվում,
 Մայրամուտն եր ժլատ վառվում,
 Իրլուրը պատել եր մութ...

Մեր գլուզն ե՝ ասրերը մերկ,
 Մեր դետը՝ բարակ միգում,
 Զանգավիճ՝ մեղմ ու բեկուն,
 Թախծում են արոս ու հերկ...

Յեվ մայրըս ահա հիվանդ
 Մրսում ե, արև ուղում,
 Նստած ե հետըս դրսում
 Անխոս ու մեղմ—հնազանդ:

Յեվ ծեր ե մայրըս այնքան,
 Փռքրիկ ե—բարի մի մայր...
 Ֆոլում ե սարը սուրսայր,
 Յերգում ե զանդը լալկան...



Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստուն.
Կիզում ե քեզ մի հուր կնիք,
Մի հրմայող ու հին խոստում:
Յեվ միթե այդ վշտիդ համար
Ձեմ սիրում քեզ, այսպես քնքույշ
Յեվ խոնարհվում քեզ պես համառ,
Ո, հայրենիք՝ դառն ու անուշ...
Ձըչացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով յերբե՛ք.—
Սիրեցի հեզ, անքեն հողիդ
Յեվ յերգերդ մեղմ ու բեկբեկ,
Խեղճությունը՝ խավար ու լուռ,
Աղոթքներդ՝ դառն ու ցավոտ,
Զանգակներիդ զարկը՝ տխուր
Յեվ խուզերիդ լույսերն աղոտ...

Մշուշի միջից,— տեսի՛լ դյուլթական,—
Բացվում ե կրկին Նաիրին տրտում
Վո՞ր յերկրի սրտում թախիժ կա այնքան
Յեվ այնքա՛ն ներում— վո՞ր յերկրի սրտում
Վորտե՞ղ են քարերն այնպես վերամբարձ
Ձեռների նման պարզված յերկնքին,
Վորտե՞ղ ե աղոթքն այնպես վեհ ու պարզ
Յեվ զոհաբերումն այնպես խնդաղին...
Վորտե՞ղ ե խոցում այնպես չար ու խոր
Սիրա՛ր մարդկային դաշույնը քինոտ,
Վորտե՞ղ ե հողին այնպես վերափոր
Յեվ անսպարտ յերկիրն այնպես արյունոտ..



Բարակիրան նախընտրեմ ինձ ժպտաց,
 Նախընտրեմ տխուրաչյա և համեստ:
 Այնպես վառ եր լեռնադատեր դեմքը բաց,
 Նայածն այնպես հրեղեն ու անարվեստ:
 Յեվ հյուսիսյան հեռուներում ու ցրտում
 Կարծես ցոլաց իմ նախնայան արևն ալ,
 Կարծես բոցե մի վարդ բացվեց իմ սրտում
 Յեվ չի կարող արթած հողիս լուռ մնալ:
 Յեվ չի կարող սիրտըս չեղել այդ անբիծ
 Հուրը, վոր ինձ ժպտաց այսօր ցուրտ հեռվում:
 Այդպես արևն ե դուրս նայում մութ ամպից
 Իմ նախնայան բա՛րձր, բա՛րձր աշխարհում...

ՎԵՐԱԴԱՐՁ

Վորպես Հաերտի վորդին, վորպես
 Ուլիս մի, թողած և հող, և տուն,
 Սնցա ծովեր ու ցամաքներ յեռ—
 Ամեն տեղ ոտար և անխնդում:

Ու հողնած քայլով ահա կրկին
 Վերադառնում եմ հայրենի հող,
 Դեպի քարերըդ աղնիվ ու հին,
 Յեվ խրճիթներըդ՝ ահավ ներհող:

Նվազով անուշ քանի սիրեն
 Կանչում եյին ինձ և կախարդում,
 Բայց սիրտըս մաքուր, վորպես ցորեն,
 Պահեց անունըդ վշտում արթուն:

Յուրա հեռուներում, անլուելի
 Կրկնաների մեջ, սրտով մոլոր,
 Յերազում եյի քո սիրելի
 Յեվ մեղմ յերգերը, վորպես որոր:

Ու կարոտակեց՝ ահա կրկին
 Վերադառնում եմ, վոր առհավես
 Ունկնդիր լինեմ քո հին յերգին
 Յեվ լամ, լամ անուշ քո յերգի հետ...

Ս Ո Ն Ե Տ

Իջնում ե գիշերն անդուլթ ու մթին
 Յեվ այդը բացվում դառն ու մահահոտ,
 Բայց հրկեղ հոգիս մորմոքում այս տոթ
 Հավատում ե դեռ քո առաքիտին:

Թող կիտվի խավարն ավելի խրթին
 Յեվ չարխինդ ճնշե հոգն իմ արյունոտ
 Ու թող դա՛, թե կա՛, ավելի՛ չար բոթ,
 Մեխվի դո՛հ-յերկրիս անարգված սրտին:

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
 Մի հեզ նախրցի՝ դնում եմ անկանդ.—
 Թող գուժական գիշերն ահասաստ դավե—
 Վորքան մութը սե՛ այնքան յես համառ,
 Յերկնի՛ր, իմ յերկիր, հավատով անմար՝
 Սուրբ ե՛ քո ուղին և պըսակը՝ վեհ...

Ս Ո Ն Ե Տ

Հայրենիքում իմ արնաներկ
 Գիշերն իջավ անլույս ու լուռ.
 Այնտեղ, ուր կար այնքան սիրերդ
 Յեվ վարդի բույր, և սրտի հուր:
 Ամեն մի միտք՝ հիմա մի վերք,
 Ամեն հայացք՝ հատու մի սուր.
 Արնոտ գիշերն են համր ու մերկ
 Նայում յերկինք՝ անգոր ու զուր:
 Մի որ ինչ վա՛ռ ծաղկեց մոգված
 Մեր նախրյան սիրտը բեկված,
 Հրով վորքա՛ն խորհրդավոր.
 Ահա՛ վորպես ծաղիկ թեքված
 Մեր հին հոգին՝ համր ու մոլոր,
 Ա՛խ, և անդո՛ր, և անարգվա՛ծ...

ԳԱԶԵԼ ԽՆԴՈՒԹՅԱՆ

Նվիրում եմ անմոռաց
Ստեփան Շահումյանի սմմահ հիշատակին

Սի՛րտդ, վորպես վառ առնուշան, պահիր վառ,
Սի՛րտդ հրկեղ, մթնում դաժան, պահիր վառ:

Սի՛րտդ խանդոտ, հրաբորբոք, պահիր վառ,
Սինդը տենդոտ, սերը՝ վահան, պահիր վառ:

Չար աշխարհի խավարի դեմ պահիր վառ,
Վորպես դրոշ արնանման, պահիր վառ:

Հեռվում անտուն, յեղիր խնդուն, պահիր վառ,
Սի՛րտդ բորբոք— վարդը վառման պահիր վառ:

Վորպես խաբույկ յեղնող վիհ, պահիր վառ,
Արեի պես, սիրտդ վառման պահիր վառ...



Մի հին տրամուլթուն անսիրտ ու խոր,
Վորպես վիշտն անյել հայրենի հողիս,
Յերգում ե սրտիս դառնազին որոր
Յե՛վ անդուլ ցավով մաշում ե հողիս:
Գիտեմ՝ չի գալու ազատության ուր,
Այնպես խոր դիտեմ, թե՛ անհանգիստ
Հողիս մոգում են յերազով անդոր
Ու դեղ վորոնում անսիրտ վերքիս:
Ազմուկն այս կյանքի արդեն իմ սրտում
Հպում ե, վորպես մահերդ մի տրտում
Ու լսում եմ այն, վորպես հնավանդ
Մայրական որոր տխրությամբ անուշ.
Յե՛վ վազուց հողիս արդեն հնազանդ
Ձրգտում ե յերկիրն... անցավ ու անհուշ:



Վորքան դեռ տրտունջ, քանի տրտմություն
 Պիտի որորեն որերըս կրկին,
 Մորմորուն դողան խոնջած իմ սրտում,
 Ձուլքեն դառնությամբ լեցուն իմ հոգին...
 Յեւ վորքան կարոտ պիտի դա վրադ
 Հոգիս, մահու չափ թախիժ ու խոցում,
 Քանիցըս պիտի դողաս անխարատ
 Յերկու աշխարհի սահմանադժում...



Դարձար դու և սիրտըս տխուր ե,
 Հնչի՛ր— յերգից անուշ,
 Քո ձայնը այնքան դեռ մաքուր ե,
 Այնքան հարազատ մի հուշ.
 Բայց սիրտըս արդեն խոնարհել ե,
 Հոգիս արդեն մարել.
 Թեթև ե արդեն ներելը,
 Բայց... Անհար ե սիրել...



Լինեյի չորան սարերում հեռու,
 Գայիր, անցնեյիր վրանիս մոտով,
 Իրար նայեյինք անուշ կարոտով,
 Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու:
 Գնայիր աղբյուրն ու յետ դառնայիր
 Թեթև, մորպես վիթ, յեկնեյիր ձորից:
 Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից
 Ու վրրանիս մոտ հանգստանայի՛ր:
 Յե՛վ վերջալուսին մի որ, ո՛ր մի որ,
 Մանիչակագուշն սարերի լանջին
 Քաջվեյինք իրար խոսքերով չնչին,
 Բայց ուխտը՝ լիներ անխաղախ ու խոր:
 Ու յերբ գնայիր— գիշերըս անքուն
 Դառնար դալիբի մի թովիչ խոստում
 Ու վառվիր հոգիս պարզ ու լոմատուն
 Իմ վրրանի տակ, սարերի գրկում:



Հովիվներն այնտեղ կրակ են արել
 Սարերի վրա— ո, անո՛ւշ հեռու.
 Ջախում են անվերջ մթնում իրարու
 Հովիվներն այնտեղ կրակ են վառել:
 Ախ, սիրտս թռավ աշխարհն այն հեռու
 Ուր, հի՛ն, հնչում ես բարբառ հայրենի.
 Հովիվներն այնտեղ կրակ են արել
 Սարերում իմ բաց, ո, անո՛ւշ հեռու...



Հովիւներն ազատ հեռու սարերում
 Կըրակ են անում— ճայնում են իրար:
 Յեւ՝ կալանավոր աշխարհում արար—
 Հովիւներն՝ ազատ հեռու սարերում:
 Ու յերկրից՝ յերկիր— գերումից՝ գերում
 Գնում եմ անդուլ, անհայտին ավար,
 Հովիւներն ազատ հեռու սարերում
 Կըրակ են անում— կանչում են իրար...



Դո՛ւ հնչիր, քո սրտի դարունն է,
 Իսկ իմում՝ վերջինն է հիվանդոտ,
 Բայց քոնից բոբբոքուն ու խանդոտ,
 Դո՛ւ հնչիր, քո սրտի դարունն է:
 Ո, յերգի՛ր, քո հոգին վառվում է,
 Իսկ իմում՝ մահացում է տենդո՛ւտ,
 Դո՛ւ հնչիր, քո սրտի դարունն է,
 Իսկ իմում՝ վերջինն է հիվանդոտ...



Ո՛ր, կըզան որեր ավելի տրտում
 Ու դժնի, դժնի, առավել դժնի.
 Կը զառնա հանկարծ բոլորն ապարդյուն,
 Ո՛ր, կըզան որեր ավելի տրտում:
 Կըլուե տրտունջն անամոք սրտում
 Յեւ փոշու նրման ձանձրույթը կիջնի...
 Ո՛ր, կըզան որեր ավելի տրտում
 Յեւ դժնի, դժնի, առավել դժնի...



Գինով եմ, գինով եմ յես ել,
 Թեթե եմ, անհոգ, լեզվանի.
 Որորի՛ր մեզ պանդոկ-կարուսել,
 Որորի՛ր, որորի՛ր մեզ, գինի:

Պոես մի անտեր ու անտուն,
 Գիտեմ յես՝ կորած եմ, կորած.
 Բայց դեռ յերդն իմ յերգում ե տենդում-
 Ո, յերա՛ղ ե, յերա՛ղ ու յերա՛ղ...

Ինչ քա՛ղցր ե նստել ախտեղ,
 Ժպտալ քո խոսքին սեթեթ,
 Իսկ ներսում իմ, ներսում մի ասեղ
 Ասողում ե՝ ննջել առհավե՛ր...

Պարում են, յերգում վետերում,
 Սահում ենք յեթեր առ յեթեր.
 Գուցե վաղն իսկ կարդաս թերթում
 Յեւ ժպտաս՝ «հանդյա՛վ ի տեր»...



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	Եջ.
Տխրություն	7
Fatum	8
Աշնան յերգ	9
Աշնան մեղեդի	10
Ինձ թաղեք	11
Կարոտ	12
Իրիկնաժամ	13
Յես անջատված եմ Հայրենի հողից	14
Աշնան տրամություն	15
Հրաժեշտի խոսքերից	16
Իմ գերեզմանին դուք չմոռենաք	17
Մթնշաղ	18
Յերեկո	19
Սենտիմենտալ յերգ	20
Դարձ	21
Ձմրան դիշեր	22
Մոռանա՞լ, մոռանա՞լ	23
14 տող	24
Գարուն	25
Գարնանամուտ	26
Փողոցի յերգը	29
Սև դիշեր	30
Հնչում ե անվերջ	31
Աշնան դիշեր	32
Տնորք	34
Հայրենիքում	35

Տխուր յերգ	37
Resignation	83
Աշնան	89
Հեկեկում ե անվերջ	40
Ուշացած սեր	41
Անարանջություն	43
Արշալույս	44
Գարնան քաղաքում	45
Բախումումի սեր	47
Փողոցում	48
Զմբան գիշեր	49
Հայտնություն	50
Կարուսել	51
Շուրի ու շրշյուն	53
Արեածաղ	54
Վերադարձ	55
Դարձյալ իջալ գիշեր	61
Սրտակեզ կսկիծ մի հին	62
Տնակն իմ ցուրտ ու անդարդ	63
Մտքերից այս տարածերժ	64
Դուրսը՝ մայիսն ե արբածը	65
Ցուրտ հովտեմբերն ե ծեծում իմ դուռը	66
Անդարդ իմ որվան	67
Վասիկահանդերձ յեկար	68
Մաշում ե իմ սիրտն անդադար	69
Պաղոյին	70
Նույնն ե հասեցդ հնամյա	71
Նամակ	72
Ախ, Բուզուլուկ քաղաքում	73
Պաղոյին	74
Հրաժեշտի դադել	75
Տրիստաներ	77
Յես չեմ հաղնել սիրելուց	87

Աշուն ե, որեքը ցրտում են	88
Սիրում եմ յես նրանց	89
Պետերբուրգ	90
Հոգնեցի գրքերից անհամար	91
Ի՞նչ մնաց ինձ	92
Տեսա յերազ մի վառ	93
Թողի յերկիրն իմ հայրենի	94
Քնքո՛ւշ, դու, լուսե աղջիկ ես	95
Կանգնել ես դու նրբահասակ	96
Այնպե՛ս նազիկ	97
Դուք մի հին վեսլ եք	98
Ձեռներում Ձեր մանրիկ	99
Մի՞թե վերջին պոետն եմ յես	100
Այնպես անխիղճ են	101
Կարծես թե դարձել եմ յես տուն	102
Հիշում եմ ինչպես այն ուշ	103
Դու հպարտ չես, իմ հայրենիք	104
Մշուշի միջից	105
Բարակերան նախուհին	106
Վերադարձ	107
Սոնետ	108
Սոնետ	109
Գաղել խնդության	110
Մի հին արամություն	111
Վորքան դեռ սրտունջ	112
Դարձար դու	113
Լինելի չորան սարերում հեռու	114
Հովիվներն ալյտեղ	115
Հովիվներն աղառ	116
Դու հնչիր, քո սրտի դարունն ե	117
Ո՛ր, կղան որեր ավելի տրտում	118
Գինով եմ, գինով եմ յես ել	119



ՀՀ Ազգային գրադարան



NL0368987

402

58597

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.
ԿԱԶՄԸ 30 Կ.

В. ТЕРЯН

СТИХОТВОРЕНИЯ

Гиз ССР Армении, Ереван, 1986 г.